Հաշվետվություն

2023 թվականի սեպտեմբերի 18-19-ը Ֆիլիպինների Հանրապետություն (Մանիլա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆիլիպինների Հանրապետություն (Մանիլա), սեպտեմբերի 18-19-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Digital x ADB 2023» միջոցառմանը

5. **Քննարկված թեմաները.**

- Ապագայի թվային ենթակառուցվածքի կառուցում,
- Ասիական զարգացման բանկի թվային փոխակերպման գործողությունների ծրագիր,
- Թվային հանրային ենթակառուցվածք,
- Երկրի դիտարկում և ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք,
- Կիբերանվտանգություն,
- Արհեստական բանականություն և տվյալների վերլուծություն,
- Թվային տնտեսություն և ձեռներեցություն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

«Digital x ADB 2023» միջոցառման շրջանակներում անցկացվեցին գիտելիքին նվիրված նստաշրջաններ և աշխատաժողովներ, որոնց ընթացքում մանրամասն ներկայացվեցին թե ինչպես է Ասիական զարգացման բանկն աջակցում զարգացող անդամ երկրներին՝ առավելագույնի հասցնելու թվային հնարավորությունները, որոնք սպասվում են «COVID-19»-ով վերափոխված աշխարհում: Միջոցառման հիմնական նպատակը թվային տեխնոլոգիաների ուսուցման հնարավորություններ ապահովելն էր:

Միջոցառման օրակարգի համաձայն՝ տեղի ունեցան պանելային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ կատարվեց թվային ենթակառուցվածքում

ներդրումների աճին՝ ուղղված ծածկույթի և հասանելիության ընդլայնմանը, ինչպես նաև թվային կապի որակի բարձրացմանը՝ թվային փոխակերպման արագացող տեմպերին համընթաց քայլելու համար:

Երկրի դիտարկման և ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի նստաշրջանի ընթացքում հանդես եմ եկել որպես բանախոս, որի ընթացքում ներկայացրել եմ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմնական կառուցվածքը, ազգային գեոպորտալի գործառույթները, քարտեզագրական համակարգը, Ինտեգրված կադաստրի ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև Կադաստրի կոմիտեի կողմից որդեգրված բարեփոխումները:

Միջոցառման ընթացքում կարևորվեց Հայաստանում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ մեկնարկած «Հայաստան. աջակցություն ազգային ստանդարտացված տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծմանը» ծրագիրը, ինչը ենթադրում է նոր չափորոշիչներով տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի ներդրում, որի կարևոր մասն են ազգային ստանդարտները և գեոպորտալը:

Ներկայացրել եմ «LX Korea» ընկերության կողմից Կադաստրի կոմիտեի ստանդարտացված տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի ստեղծմանն աջակցելու աշխատանքների ընթացքը:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Գործուղման ընթացքում հանդիպումներ ունեցա Ասիական զարգացման բանկի պաշտոնյաների հետ, որոնց հետ քննարկվեցին հետագա համագործակցության հեռանկարները, ինչպես նաև ոլորտային ծրագրերում Կադաստրի կոմիտեի ներգրավվածության հնարավորությունները:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան 20.09.2023 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե
2 Գործուղման մասին իրավական ակտերի համարները 08.09.23թ. N 916-Ա և 22.09.23թ. N 962-Ա ՀՀ Վարչապետի որոշումներ
3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար
4 Գործուղման վայրը Ֆիլիպինների Հանրապետություն (Մանիլա)
5 Գործուղման ժամկետները 18.09.2023-19.09.2023թթ.
6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սուրեն Թովմասյան
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը էկոնոմ դաս	
	Ավիածառայության արժեք (դրամ)	-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-
	Օրերի քանակ	-
	Ընդամենը (դրամ)	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-
	Օրերի քանակ	-
	Ընդամենը (դրամ)	-
Ընդամենը ծախսեր (դրամ)		-

Գլխավոր քարտուղար Միհեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
26.09.2023թ.